Արձանագրություն 2
ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.10.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Կ. Գասպարյան-ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Վարդանյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետի տեղակալ,

Ս. Թահիրյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի ՏՏ անվտանգության վարչության թիվ 1 բաժնի պետ,

Ա. Գրիգորյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ,

Դ. Սանթրոսյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության օտարերկյան պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ջիլավյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի իրավաբանական վարչության փորձագետ,

Փ. Քալաջյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու,

Տ.Սարգսյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի ՏՏ անվտանգության վարչության թիվ 1 բաժնի տեղեկատվական համակարգերի պատասխանատու

Գնումները համակարգող

Մ. Սարգսյան՝ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի պետ

1. **<u>Տեղեկություններ հայտերի բացման մասին</u>**

Հայտերը բացվել են <u>www.armeps.am</u> կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 16-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -8, դեմ – 0:

2. **<u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին</u>**

ՖՆ-ԲՄԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Յունիքոմփ» ՓԲԸ	ՀՎՀՀ 0815551, հասցե՝ ք. Երևան, Չարենցի 37, էլ հասցե info@unicomp.am
«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ	ՀՎՀՀ 02704268, հասցե՝ ք. Երևան, Արգիշտիի փող., 7 շենք, 4-րդ հարկ, էլ հասցե yerevan@step.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ - 8, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովը որոշեց մերժել ներքոհիշյալ կազմակերպության կողմից ներկայացված հայտը հետևյալ հիմանվորմամբ.

1	«Յունիքոմփ» ՓԲԸ	Մասնակիցը հայտի ապահովումը պետք է ներկայացներ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով (քանի որ արժեքը գերազանցում է 70 000 000 ՀՀ դրամը), սակայն ներկայացրել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Մյուս մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/3 ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)					
		«Յունիքոմփ» ՓԲԸ			«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	*Վիրտուալացված հաշվողական համակարգի ապարատա-ծրագրային կոմպլեքսինախագծման, մատակարարման և ներդրման ծառայություններ*	1158210000	231642000	1389852000	603191032	120638206.4	723829238.4

Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին:

2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն ու ուղեկցող գրությամբ ներկայացնել բանկային երաշխիքի բնօրինակը:

3. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -8, դեմ – 0:

5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/3 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 8, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Վարդանյան

_____ Ս. Թաիրյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Դ. Սանթրոսյան

_____ Հ. Ջիլավյան

_____ Փ. Քալաջյան

_____ Տ.Սարգսյան